

Եկեղեցին և զանգվածային լրատվության միջոցները

(քննարկման նյութեր)

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԼՈՐ ՍԵՂԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Է

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ
ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Եկեղեցին և զանգվածային լրատվության միջոցները

(քննարկման նյութեր)

ՄԲ Էջմիածին 2013

**Սույն գրքույկը ներկայացնում է ԵՀԽ
Հայաստանյան Կլոր սեղան միջեկեղեցական
բարեգործական հիմնադրամի և Մայր Աթոռ
Սուրբ Էջմիածնի Տեղեկատվական համակարգի
«Երկխոսության սրահ» համատեղ ծրագրի
շրջանակներում կազմակերպված «Եկեղեցին և
զանգվածային լրատվության միջոցները» թեմայով
քննարկման (14 նոյեմբերի 2013 թ., Սբ Էջմիածին)
նյութերը:**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	5
Զեկույց Ա – Եկեղեցին և զանգվածային լրատվության միջոցները	7
Զեկույց Բ – Եկեղեցի և զանգվածային լրատվամիջոցներ.....	19
Ամփոփում.....	27

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

2013 թ. նոյեմբերի 14-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում, նախաձեռնությամբ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան Կլոր սեղան միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի և Մայր Աթոռի Տեղեկատվական համակարգի, «Երկխոսության սրահ» համատեղ ծրագրի շրջանակներում տեղի ունեցավ «Եկեղեցին և զանգվածային լրատվության միջոցները» թեմայով քննարկում:

Մերօրյա աշխարհում ՁԼՄ-ների դերը և նշանակությունը գնալով մեծանում է, որին զուգահեռ մեծանում է նաև պատասխանատվությունը մատուցվող տեղեկատվության համար: ՁԼՄ-ները, ունենալով վիթխարի ազդեցություն անհատի և հասարակության վրա, ոչ միայն իրավասու են տեղեկատվության հաղորդիչները լինելու, հայելու սկզբունքով արտացոլելու կյանքի պատկերը, այլև մեծ առաքելություն ունեն մարդկանց դաստիարակության և երիտասարդ սերնդի կրթության նվիրական գործում:

Ներկայիս տեղեկատվական բարդ գործընթացները, շուկայական մրցակցությունը, որից զերծ չէ նաև լրատվական դաշտը, շատ հաճախ շփոթ և պատրանքային իրականության պատկեր են ստեղծում: Մարդկային բնագոյներից ու առևտրային շահերի թելադրանքից էլնելով՝ բռնության, ատելության, ազգային ու կրոնական տարբերությունների մասին եղած թեմաների շահագործումը սովորական գործելակերպ է դառնում ՁԼՄ-ներում, գրեթե անտեսվում են տեղեկատվության տրամադրման իրավական պահանջները: Մինչդեռ ցանկացած տեսակի լրատվամիջոց կոչված է

նան հոգալու անհատի ու հասարակության բարոյական նկարագրի ձևավորումը: Հանրությանը փոխանցվող տեղեկատվությունը պետք է լինի օբյեկտիվ և անաչառ և պայմանավորված չլինի նեղ, անհատական, երբեմն խմբային և կուսակցական շահերով:

Ով, եթե ոչ ՁԼՄ-ները պետք է հետամուտ լինեն դրական գաղափարների բացահայտմանը, անտեղիտալի պայքար տանեն հասարակության մեջ տարածում գտնող չարիքի, մեղքի և զանազան արատների դեմ:

Եկեղեցու հոգևոր, կրթական և հասարակական առաքելության կարևորագույն գրավականներից մեկը ՁԼՄ-ների հետ համագործակցությունն է, որի շնորհիվ նաև Եկեղեցու ուղերձը փոխանցվում է հասարակության լայն շերտերին: Եկեղեցու յուրաքանչյուր կառույց և սպասավոր կոչված է բարձր գիտակցությամբ մոտենալու այս համագործակցությանը, որով հնարավորություն է ստեղծվում աշխարհիկ հանրության կյանքում ոչ միայն հետաքրքրություն առաջացնել եկեղեցական կյանքի տարբեր կողմերի և քրիստոնեական արժեքների հանդեպ, այլև հանրության ուշադրությունը սևեռելու իր կյանքի առաջընթացը խոչընդոտող տարբեր երևույթների ու մերժելի բարքերի վրա:

Այս համագործակցությունը կնպաստի նաև տեղեկատվական դաշտի առողջացմանը, եկեղեցական կյանքի մասին սխալ պատկերացումների սրբագրմանը:

Այս քննարկումն այդ ուղղությամբ կատարված առաջին փորձն է: Նյութն ընդգրկում է և հնարավոր չէ մեկ հանդիպմամբ քննության առարկա դարձնել Եկեղեցի-ՁԼՄ-ներ համագործակցության բոլոր երեսները:

Վահրամ քահանա Մելիքյան

ԶԵԿՈՒՅՑ Ա

Գոհար Հակոբյան

*ԵՊՀ Շուրնայիստիկայի ֆակուլտետի դասախոս,
«Առավոտ» օրաթերթի թղթակից*

Եկեղեցին և զանգվածային լրատվության միջոցները

Զանգվածային լրատվության միջոցներում (ԶԼՄ) հոգևոր թեմաներով, այդ թվում Եկեղեցու վերաբերյալ, հաճախ են հրապարակումներ լինում: Այս առումով ակտիվ է նաև սոցիալական մեդիան: Սոցցանցերը և բլոգը հասարակական և ինֆորմացիոն գործիքներ են, և այսօր յուրաքանչյուր ոք կարող է լրագրող լինել, հետևաբար կարծիք ձևավորել, դիցուք՝ ֆեյսբուքում կամ թվիթերի միկրոբլոգում արված գրառման միջոցով:

Այսօր այնպիսի կայքեր, ինչպիսիք են mediamall-ը, blognews-ը, armblogs-ը և այլն, կարող են ուղղակի վերցնել որևէ օգտատիրոջ ֆեյսբուքյան ամենատեսաձ գրառումը Եկեղեցու վերաբերյալ, տեղադրել իրենց կայքում ու այդպիսով տիրաժավորել այն: Եվ որքան «սուր» է գրառումը, այնքան ավելի շատ է դիտումների քանակը: Ընդ որում, եթե ԶԼՄ-ներն իրենց վարքականոնների համաձայն, պարտավոր են ցանկացած տեղեկություն ճշտել առնվազն երկու աղբյուրից և նոր միայն հրապարակել, բլոգի, ֆեյսբուքի պարագայում նման կանոններ չկան:

Մյուս կողմից՝ միշտ չէ, որ միայն սուր բնույթի գրառումներ են հայտնվում նման կարգի կայքերում:

Օրինակ՝ տեր Վահրամի ֆեյսբուքյան հետևյալ գրառումը բոպեներ անց տեղ գտավ blognews-ում. «Լռության մեջ խոսում է Աստված: Երբ լռում ենք, այդ լռության մեջ ստանում ենք մեր կյանքի բոլոր տեսակի հարցերի, խնդիրների, տառապանքների, հույզերի և սպասումների արդարացի պատասխանները: Սակայն արի ու տես, որ մարդկային տկարությամբ չենք կարողանում երբեք դադարել ինքնարտահայտվելուց, լռել և ունկնդիր լինել այդ Ձայնին, որ միշտ կանչում է՝ ցույց տալու յուրաքանչյուրիս կյանքի ճշմարիտ ուղին»:

Ինչ վերաբերում է հոգևոր թեմաներով հրապարակումներին, հիմնականում դրանք հարցազրույցի ժանրում են: Որևէ հոգևորականի կամ Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի՝ հանրային հնչեղություն ունեցող թեմայի շուրջ արված մեկնաբանությունը նոր նյութի առիթ կարող է դառնալ և շրջանառվել սոցցանցերում: Նույն հրապարակման տակ կծավալվեն նաև քննարկումներ, եթե, իհարկե, տվյալ լրատվական կայքը ընձեռում է նման հնարավորություն: Հայաստանյան ՁԼՄ-ներում շատ են նաև կարճ լուրերը՝ Մայր Աթոռից ստացված մեկնաբանությամբ կամ առանց դրա: Անգամ քահանաների կարգալուծության մասին Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի տարածած մամուլի հաղորդագրություններն են ընթերցվող ու հետաքրքիր: Դրանք ՁԼՄ-ներն իրենց հարմար վերնագրերով զետեղում են իրենց լրահոսում: Միաժամանակ, ոչ մի խմբագիր իր լրատվամիջոցում չի զետեղում հոգևոր եզրույթներով ու խրթին ձևակերպումներով տեքստ, քանի որ դա հանրամատչելի չէ:

Հանդիպում են նաև տեսանյութեր, լուսանկարներ, որոնք ավելի խոսուն են, քան տեքստային հրապարակումները:

Շատ են հոգևոր թեմաներով հրապարակումների արտատպումները արտասահմանյան լրատվամիջոցներից՝ տեսանյութերով հանդերձ: Օրինակ՝ Հռոմի պապի ելույթի ժամանակ փոքրիկ տղայի բեմում հայտնվելու դրվագը: Այս տեսանյութը բազմաթիվ կիսումներ (share) ունեցավ, այն տարածվեց ֆեյսբուքում հայաստանյան օգտատերերի կողմից: Եղան անգամ քննարկումներ ու հրապարակումներ, թե ինչ կպատահեր, եթե նման իրավիճակ ստեղծվեր Հայաստանում: Մեծ տարածում գտավ նաև Casal del Marmo բանտում կատարված Ոսնվայի արարողությունը, որի ժամանակ Հռոմի պապը, լվանալով 12 անչափահաս բանտարկյալների ոտքերը, օգտագործել էր 720 թելից գործված սրբիչ: Թելերից յուրաքանչյուրը բերվել էր Հիսուս Քրիստոսի երկրային ուղու հետ կապված տարբեր վայրերից: Հայաստանյան ՁԼՄ-ներում օգտագործվեց Ոսնվա պատկերող այն լուսանկարը, որտեղ Արցախի թեմի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը լվանում էր զինվորների ոտքերը: Այս առումով շարքային ընթերցողին կարող են հետաքրքիր չթվալ «դասական» լուսանկարները կամ տեսանյութերը, որտեղ, օրինակ, կարող է պատկերված լինել սեղանի առջև նստած հոգևորական և կամ եկեղեցում որևէ ձեռն իրականացնող սպասավոր:

Ընթերցողը քաղց ունի սկանդալային նյութերի, լրատվամիջոցները՝ like-երի: Դիցուք, հայր Հակոբի վարքի մասին ասուլիսի լուսաբանումը և Միացյալ

երիտասարդական լիգայի հայտարարությունը 6000-ից ավելի դիտում է հավաքել մի քանի ժամում:

Եկեղեցին հանրային հետաքրքրություն առաջացնող թեմա է, ու ցանկացած փոքրիկ վրիպում ձնագնդի էֆեկտով տարածվում ու քննարկվում է մամուլում, սոցիալական մեդիայում: Օրինակները շատ են՝ տեր Ասողիկի արած հայտնի արտահայտությունը, թե հեթանոս հայը հայ չէ, qahana.am-ի ռոքի մասին արված հրապարակումը և այլն: Նման երևույթները բացասական արձագանք են գտնում ՁԼՄ-ներում:

Ընդհանուր առմամբ այնպիսի տպավորություն կա, ինչի մասին ՁԼՄ-ները շեշտադրում են իրենց հրապարակումներում, թե մեր Եկեղեցին մի տեսակ կտրված է և ներկա իրողությունների հանդեպ համապատասխան վերաբերմունք չի ցուցաբերում: Հոգևորականի ազդեցիկ խոսքը կարող է փշրել Եկեղեցու և ժողովրդի՝ միմյանցից օտարված լինելու միֆը:

Այս առումով որոշ հոգևորականների սոցիալական ցանցերում և բլոգային տիրույթում ակտիվությունը ի նպաստ Եկեղեցու է: Սոցցանցերը, ինչպես վերը նշեցի, չպետք է առանձնացնել ավանդական մեդիայից, որովհետև դրանք ինֆորմացիայի տարածման ամենաարագ միջոցն են: Հոգևորականներից շատերի ֆեյսբուքյան և բլոգային գրառումները, եթե իհարկե դրանք կառուցված են ՁԼՄ-ներին հետաքրքիր լինելու սկզբունքներով, տեղ են գտնում լրատվամիջոցներում: Օրինակ՝ Կոմիտաս վարդապետի ֆեյսբուքյան գրառումները մի քանի տասնյակ կիսումներ են ունենում: Կոմիտաս վարդապետի՝ Վարդան Պետրոսյանի վերաբերյալ գրառումը 43 կիսում

է ունեցել Ֆէյսբուքում, մոտ երկու հարյուր հավանության (like) արժանացել: Այսինքն՝ այդ կերպ հոգևորականը կարծիք է ձևավորում, որ Եկեղեցին ևս մտահոգ է այն ամենով, ինչ կատարվում է մեր երկրում:

Մի օրինակ ևս: Հայր Ռուբենը իր ֆէյսբուքյան էջում գրառում էր կատարել Կոմիտաս 5 հասցեում ծավալվող իրադարձությունների և կանանց հանդեպ ոստիկանների կիրառած բռնությունների մասին: Այդ գրառման հիման վրա հոդված պատրաստվեց «Առավոտում», որը օրվա ամենակարդացված նյութերից մեկը դարձավ: Գրառումը հետաքրքիր էր նրանով, որ հայր Ռուբենը Պողոս առաքյալին հղում անելով՝ խոսում էր մերօրյա դեպքերից. «Ոստիկանը կոչված է հասարակական կարգը պահպանելու, բայց ոչ բռնությամբ, այլ միայն ու միայն մասնագիտական պրոֆեսիոնալիզմի, անաչառության և մարդասիրության հիմունքներով, մանավանդ՝ երբ դիմացդ հայրենակիցդ է կանգնած: Բռնությանը բռնությամբ չեն պատասխանում. սա ավելի քան վերաբերում է օրենքի պահապաններին, իսկ քրիստոնյաներիս Պողոս առաքյալը հորդորում է. «Որևէ մեկի չարիքին չարիքով մի՛ հատուցեք: Չանացե՛ք անել այն, ինչ բարի է բոլոր մարդկանց աչքին... Մի՛ պարտվիր չարից, այլ բարի՛վ հաղթիր չարին» (Հռոմ. 12:17, 21): Առաքյալը պաշտոնյաների ու պետական ծառայողների համար բացառություն չի նշում»:

Եկեղեցու և հոգևորականների մասին հրապարակումների քննարկումները շատ կարևոր են հասարակական տրամադրությունները որսալու առումով:

Վերը նշված հրապարակման տակ, մեկնաբանություն

էր թողել ազգագրագետ Հրանուշ Խառատյանը. «1700 տարի ողջ ժողովրդով հենարան ենք եղել եկեղեցուն, գոհվել են մեր նախնիները հանուն եկեղեցու, ոչ միայն հանուն հավատի, այլ՝ հանուն եկեղեցու ինստիտուտի, որքան հոգևորականներ իրենց կյանքն ու միտքն են ներդրել՝ արարելու, ծաղկելու, շարադրելու, քննելու, հասկանալու, հավաքելու, արտագրելու, պահելու, փոխանցելու, սովորեցնելու... Որքան բանավիճելու, հռետորաբանելու արվեստ, որքան համառություն, որքան հույզեր, որքան ակնկալիքներ, որքան նվիրում, որքան սեր, որքան հավատ, որքան խռովք... այս ամենը մեզ են հասցրել... և այդ վաստակը գնահատվել է: Ափսոս է դրանց տեր չկանգնելը, ափսոս է դասեր չքաղելը, ափսոս է ներփակվելը, ափսոս է օտարանալը... Աստված Ձեզ երկար կյանք տա, հայր սուրբ, որ խախտեցիք մեր հոգևոր հայրերի լռությունն ու անտարբեր թվացող դիտորդի կարգավիճակը»:

Դարձյալ «Առավոտի» օրինակով նշեմ, որ Եկեղեցուն վերաբերող հրապարակումները մեր կայքում ամենաշատ ընթերցվողներից են: Եվ այնպես չէ, որ դրանք պարտադիր քննադատություն են պարունակում Եկեղեցու հասցեին: Օրինակ՝ Բագրատ Սրբազանի «Հայաստանի չծնված մայրերը հրապարակումը» մեկ օրում հազարից ավել դիտում էր «հավաքել» և արտատպվել այլ ՁԼՄ-ներում՝ aysor.am, hayeli.am: Գաղտնիքն այն է, որ սրբազանը բարձրաձայն էր սեռով պայմանավորված պտղի արհեստական ընդհատման խնդրի մասին: Նրա ամենակարևոր դիտարկումներից մեկն այն էր, որ երևույթը «աշխարհիկ մարդ» ստեղծող և «աստվածասպան» ձևավորվող այսօրվա արժեհամակարգի հետևանքն է,

որտեղ մարդու արժանապատվությունն ամբողջությամբ մերժված է՝ հոգեմտավոր էակից նրան վերածելով տնտեսական էակի:

Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանի՝ «Հայոց աշխարհին» տված հարցազրույցը, որտեղ սրբազանը կոչ է անում ցեխ շարտելու, Եկեղեցի, պետություն քննադատելու փոխարեն՝ համախամբել մեր ներուժը ու զորացնել մեր հայրենիքը, ևս կարադացվածներից էր: Նրա խոսքով՝ եթե քննադատություն պետք է լինի, ապա ոչ թե մաղձով ու չարությամբ լեցուն, այլ միայն օգնող ու առողջացնող: «Առավոտին» տված հարցազրույցներից մեկում էլ անդրադարձ կար Հայ Եկեղեցու էկոմենիկ լայնախոհությանը՝ մինչև այն սահմանը, երբ այն չի վտանգի ազգային շահերն ու արժեքները: Հարցազրույցը կրկին Հովակիմ Սրբազանի հետ էր:

Մեծ արձագանք է ունեցել Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի՝ «Հետքին» տված հարցազրույցը: Որքան սուր են հարցադրումները, այնքան հետաքրքիր են ստացվել պատասխանները և հաստատ՝ հոգուտ Եկեղեցու: Լրագրողի՝ «Միթե անսխալական է հովվապետը» հարցին, սրբազանը հետևյալ սեղմ, բայց ազդու պատասխանն է տվել. «Հովվապետն անսխալական է Աստծով»: Նրա ամենակարևոր շեշտադրումն էր. «Դուք լսե՛լ էք, արդյոք, որևէ հայ հոգևորականից ռևանշիստական կոչեր... Հայ Եկեղեցին իր ոչ մի զավակին, նույնիսկ իրեն հայհոյող զավակին չի վտարել և չի վտարում: Այլ ընդհակառակն, ասում է՝ անդրա-

դարձիր, համեցիր, վերադարձիր»: Ի դեպ, սա ևս քննարկված հոդված էր:

Մեկ այլ հրապարակում՝ <http://www.aravot.am/2013/07/10/264164/>, որտեղ Ս. Վահրամ քահանա Մելիքյանը մեկնաբանում էր Ֆրանսիայի թեմի առաջնորդ Ս. Նորվան արքեպիսկոպոս Զաքարյանի հրաժարականը: «Ամենայն հայոց կաթողիկոսը երբևէ չի պահանջել Նորվան սրբազանի հրաժարականը: Մա Սրբազանի կայացրած անձնական որոշումն է: Ընդհակառակը, մեկ տարի առաջ Ամենայն հայոց կաթողիկոսը, ընդառաջ թեմական-պատգամավորական ժողովի ցանկության, գնահատելով Նորվան սրբազանի ծառայությունը, վերահաստատեց նրան առաջնորդական իր հանգամանքի մեջ», - ասում էր Տեր Հայրը: Այս թեմայով ամենակարգացվածներից էր Նորվան սրբազանի՝ Ֆրանսիայի «Այբ FM» հայկական ռադիոկայանին տված հարցազրույցը, որտեղ Սրբազանը մեկնաբանել էր իր հրաժարականը

(<http://www.aravot.am/2013/07/08/263236/>):

«Առավոտում» Ս. Եղիա աբեղա Խաչատրյանի հրաժարականի մասին հրապարակմանը զուգահեռ տպագրվեց Մայր Աթոռի տեսակետը, ավելի ուշ Հովակիմ Սրբազանի հետևյալ մեկնաբանությունը. «Այս մասին Մայր Աթոռի մամլո խոսնակը պաշտոնապես արտահայտվել է և ինձ իրավունք չեմ վերապահում տեղեկատվական բնույթի որևէ հավելում կատարել: Իմ կարծիքով, նրա (տեր Եղիա աբեղա Խաչատրյանի) վարքագծում լրջության պակաս կա: Այստեղ աշխատում է նաև տարիքային գործոնը: Հայր Սուրբի համար ապահովված են եղել բոլոր նպաստավոր

պայմանները ավելիով՝ ուսանելու և գործելու: Ուինսթոն Չերչիլի հայտնի խոսքերը կան. «Երբ երիտասարդ էի, ուզում էի փոխել աշխարհը, հասուն տարիքում ցանկանում էի բարեփոխել իմ երկիրը, երբ տարիքս առա, ուզում էի ընտանիքս բարեփոխել, բայց միայն մահվան մահճում հասկացա, որ պիտի փոխեի միայն ինքս ինձ...»: Եկեղեցու ուժը իր ներքին դիսցիպլինայի մեջ է: Որևէ մեկը չի կարող իրեն վեր դասել այս ամենից և իր համար արտոնյալ վիճակ ստեղծել»:

Շատ մեկնաբանված նյութերից էր կուսակրոնության թեմային վերաբերող հրապարակումը (<http://www.aravot.am/2013/10/09/394332/>):

Ի դեպ, եթե հոգևորականի արտահայտած մտքից ածանցվում է լրագրողական տեսանկյունից սուր վերնագիր, որը կարող է հոդվածը ավելի կարդացվող դարձնել, դրանում չպետք է բացասական միտում տեսնել, որովհետև այդ միջոցով ՋԼՄ-ն առավել շատ ընթերցող է ապահովում: Այդպես երկու հարց է լուծվում. և՛ հոգևոր թեմայով հրապարակումն է լայն հնչեղություն ստանում, և տվյալ ՋԼՄ-ի կայք այցելություններն են ավելանում: Երուսաղեմի պատրիարքի արտահայտությունը՝ «Գարշապար լիզողների մասին» վատ իմաստով թեավոր խոսք դարձավ, բայց նաև քննարկումների ու այլ կարծիքներ հնչեցնելու հնարավորություն տվեց: Մայր Աթոռի միաբան Ս. Պարթև աբեղա Բարսեղյանի «Պատրիարքի նամակը պատիվ չի բերում պատրիարքին» վերնագրված հոդվածը գրանցեց մոտ 3000 դիտում և 17 մեկնաբանություն: Մեկնաբանությունների մեծ մասի հեղինակները սփյուռքահայեր էին: Այսինքն՝

հայաստանյան մամուլում հոգևոր թեմաներով դիտարկումների և արծարծումների լսարանը միայն Հայաստանը չէ: Ու ցանկացած հրապարակման պարագայում մեծ է և՛ հարցազրույց տվողի, և՛ հրապարակման հեղինակի պատասխանատվությունը:

Եվս մեկ դիտարկում: Հրաշալի է մտածված «Հայ եկեղեցականներ» ֆեյսբուքյան էջը՝

<https://www.facebook.com/yekeghecan>: Այստեղ հաճախ զետեղվում են ինքնատիպ ու կենդանի լուսանկարներ, որոնք ավելին են, քան լուսանկարը և դրանով իսկ դրական վերաբերմունքն են ձևավորում Եկեղեցու հանդեպ: Այդպիսի լուսանկարներից մեկում, օրինակ, Վեհափառ Հայրապետից արյուն են վերցնում: Սա շատ մարդկային է: Դրանով ասվում է, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեզանից մեկն է, և մենք զատված չենք Եկեղեցուց: Եթե նման լուսանկարներ և տեսանյութեր շատ լինեն համացանցում, հոգևոր կառույցների կայքէջերում, հոգևորականների բլոգներում, լրագրողները հոդվածների հետ նկարներ դնելիս ընտրության լայն հնարավորություն կունենան, կօգտագործեն, այսպես կոչված «բարի» լուսանկարներ ու տեսանյութեր:

Այսպիսով՝ ՋԼՄ-ների ուժը, իրազեկելու, տեղեկատվությունը հանրայնացնելու առաքելությունը կարելի է այնպես օգտագործել, որ հոգևորականը, Եկեղեցին «յուրային» ընկալվեն: Դրա համար անհրաժեշտ է, որ հռետորական ձիրք ունեցող և «սաղրանքների չտրվող» հոգևորականները հաճախ մասնակցեն թոք-շոունների, ռադիո և հեռուստատեսային հաղորդումների, նրանց հետ հանրությանը

հետաքրքրող թեմաներով ավելի հաճախ հարցազրույցներ լինեն տպագիր և առցանց մամուլում:

Այս համատեսքստում կրկին դառնալով ռոք երաժշտության մասին qahana.am-ում արտատպված նյութին, որն իրարանցում էր առաջացրել վիրտուալ հարթակներում, չենք կարող չնշել դրան հետևած կայքի՝ առանց ազրեսիայի, ճիշտ կառուցված պարզաբանումը: «Որպես երիտասարդներ՝ Դուք ճիշտ կերպով եք պաշտպանում այն, ինչը Ձեզ հոգեհարազատ է: Եվ մենք բնավ Ձեզ Ձեր սիրելի զբաղմունքից կտրելու նպատակ չունենք: Քանի որ մեր խմբագրությունը հանրության ուշադրությանն է ներկայանում հոգևոր տարբեր հարցերի մասին հոգևորականների, գիտնականների, պատմաբանների ու հոգեբանների հետազոտություններ, ուսումնասիրություններ, տեսակետներ, վերլուծություններ, այս անգամ որոշեցինք Ձեր դատին հանձնել երաժշտության մասին վաղուց ի վեր քննարկվող այս նյութերը: Մենք չենք կարող պահանջել սիրել կամ չսիրել որևէ երաժշտական ուղղություն: Չենք կարող պնդել, որ այս կամ այն երաժշտությունը ճաշակով կամ անճաշակ է: Եվ չենք կարող համադրել՝ ռոքը ռափսի, փոփը՝ դասականի, ժողովրդականը՝ ռոքնռոլի կամ մեկ այլ ուղղության հետ: Դրանք բոլորն էլ որոշակի պատմություն, առաջացման դրդապատճառներ, էմոցիոնալ ֆոն ունեցող ոճեր են, որոնք մանրամասն ուսումնասիրվել են»: Բավականին հաջող էր qahana.am-ի խմբագրության մեկնաբանության վերջաբանը. «Խնդրում ենք շարունակել քննարկումները, արտահայտել Ձեր տեսակետները: Ձեզ համար նյութեր ընտրելիս մենք Ձեր կարծիքը շատ ենք կարևորում»:

Եթե հոգևորականի պատասխանը ազրեսիվ բաղադրիչ է պարունակում, այն նոր՝ առավել անհաջող հողվածի ծնունդ կարող է տալ և բացասական կարծիք ձևավորել: Եթե հոգևոր թեմաներով հրապարակումների տակ գուսպ և դիպուկ մեկնաբանություններ լինեն հոգևորականների կողմից, դրանք անպայման ավելի օգտակար կլինեն՝ ներշնչելով այն միտքը, որ հոգևորականները ներանձնացած ու իներտ չեն և պատրաստ են առողջ բանավեճի, այսինքն՝ ուժեղ են:

ԶԵԿՈՒՅՑ Բ

Արա Գալոյան

*«Շողակաթ» հեռուստարձկերության ծրագրերի
պատասխանատու*

Եկեղեցի և զանգվածային լրատվամիջոցներ

Իբրև լրագրող և, որ ավելի կարևոր է, իբրև Հայ Առաքելական Եկեղեցու անդամ իմ աշխատանքի ընթացքում բազմաթիվ անգամներ եմ բախվել իրավիճակի, որը կարելի է բնութագրել որպես շահերի բախում: Այդ իրավիճակներում լրագրողի մասնագիտական շահը պահանջում է մասնագիտական պատշաճ մակարդակում անդրադառնալ կոնկրետ թեմային, իսկ Եկեղեցու անդամի զգացումն ու (ներողություն աշխարհիկ ու օտար տերմինի կիրառման համար) կորպորատիվ շահը պահանջում է մեղմ ներկայացնել իրավիճակը: Որպես լրագրող անկեղծ պիտի ասեմ, որ նման մոտեցումը միշտ չէ, որ ճիշտ է, որի մասին՝ զեկույցի վերջում՝ կոնկրետ օրինակով: Իսկ այժմ՝ հայաստանյան ԶԼՄ-ների մասին:

Հայաստանյան ԶԼՄ-ների ներկա բնութագիրը

Տպագիր ԶԼՄ-ների դերի անկումը սկսվել է անցյալ դարի 90-ականներից: Համաշխարհային այս գործընթացը Հայաստանում մի քանի տարի ավելի շուտ սկսվեց: Պատճառն այն չէր, որ մենք համաշխարհային գործընթացներից առաջ էինք ընկել: Պատճառը տնտեսական ճգնաժամն էր: Հետո ակտիվորեն սկսեցին

զարգանալ էլեկտրոնային լրատվամիջոցները: Հեղինակավոր ու հարյուրամյա պատմություն ունեցող շատ լրատվամիջոցներ, հրաժարվելով տպագրությունից, սկսեցին «հրատարակվել» համացանցում: Նոր էլեկտրոնային լրատվամիջոցների ամենադրական կողմն արագությունն է. լրատվամիջոց-սպառող կապից դուրս մնաց տպարանը և լրատվամիջոցները դարձան ավելի մատչելի:

Ստույգ չգիտենք՝ որքան մարդ է Հայաստանում օգտվում ինտերնետից, բայց ակնհայտ է, որ այդ թիվը մեծ է: Համացանցին միացած համակարգիչը անվճար հեռախոս է: Իսկ արտագաղթի և արտագնա աշխատանքի մեծ ծավալներ ունեցող Հայաստանում այն կարևորագույն կապի միջոց է արտերկրում գտնվող հարազատների հետ շփվելու համար: Հետևաբար՝ էլեկտրոնային լրատվամիջոցներն իրենց մատչելիության շնորհիվ գնալով ավելի ազդեցիկ են դառնում մեր երկրում: Սակայն էլեկտրոնային ՁԼՄ-ների հիմնական առավելությունը՝ արագությունը, նաև բացասական կողմեր ունի: Մա կարելի է բացատրել հետևյալ օրինակով: Մի քանի տարի առաջ «Հայկական ժամանակ» օրաթերթը, փորձելով հետ չմնալ լրատվության ոլորտում, սկսեց հրապարակել լուրեր՝ առանց դրանց իսկությունը ստուգելու համար ժամանակ ծախսելու: Մեկ-երկու ամսից անընդհատ հերքումներ տպագրելուց հետո թերթի խմբագրությունը հրապարակավ հայտարարեց, որ հրաժարվելու է արագության այդ մրցավազքից և հրապարակելու է միայն ստուգված տեղեկատվություն:

Առցանց լրատվամիջոցները գերադասում են չստուգված լուրը վերահրապարակել նշելով սկզբնաղ-

բյուրը և այս կերպ խուսափել հերքում հրապարակելու պատասխանատվությունից՝ այդ գործը «զիջելով» սկզբնաղբյուր լրատվամիջոցին:

Էլեկտրոնային լրատվամիջոցների մյուս ակնառու առանձնահատկությունը դրանց մեծաթիվ քանակն է: Արդյունքում՝ բավարար չէ անհրաժեշտ որակավորում ու հմտություններ ունեցող լրագրողների քանակը: Բազմաթիվ բուհերում գործող ժուռնալիստիկայի ֆակուլտետները, չունենալով դասավանդող որակյալ պրոֆեսորադասախոսական կազմ, ի վիճակի չեն լուծել այս խնդիրը: Ես գիտեմ առնվազն մեկ գլխավոր խմբագիր, ով աշխատանքի չի ընդունում ժուռնալիստի մասնագիտությամբ լրագրողի, պնդելով, որ ոչ մասնագիտական կրթություն ունեցող երիտասարդ մասնագետն ավելի մեծ շանս ունի դառնալ որակյալ լրագրող:

Հայաստանյան լրատվամիջոցները մեկ այլ առանձնահատկություն էլ ունեն: Նույն լրագրողին կարելի է հանդիպել և՛ մշակույթի նախարարի, և՛ պետեկամուտների կոմիտեի նախագահի ասուլիսներին: Ավելին՝ այդ լրագրողները մեկ օր առաջ տեղյակ էլ չեն լինում, թե ի՞նչ ոլորտ են «լուսաբանելու» հաջորդ օրը: Ուստի այդ երկու ասուլիսներին էլ հավասար չափով անպատրաստ են: Սրա պատճառը միայն լրատվամիջոցների ֆինանսական սուղ միջոցները չեն: Լրագրողը ցանկացած թեմայի վրա աշխատելու բավարար ժամանակ չունի. խմբագիրը շտապեցնում է: Ասել թե սա հայաստանյան երևույթ է, սխալ կլինի: Մենք չենք հորինել՝ «Ինձ պետք չէ լավ, ինձ պետք է չորեքշաբթի» խմբագրապետերին վերագրվող ասացվածքը, որ լավագույնս բնութագրում է մեր

Ժամանակների ժուռնալիստիկան: Ընդհանրապես մեր հասարակությունը հայ լրագրողին վերագրում է «մեղքեր», որ միայն մեզ չեն բնորոշ: Դրանք մասնագիտական են և համընդհանուր: Միայն հայ ժուռնալիստիկան չէ, որ թեմայի բացակայության պարագայում կեղծ թեմաներ է հորինում: Հասարակությունը լրատվամիջոցից միշտ էլ առանձնահատուկ ու հետաքրքիր բանի սպասում ունի: Անընդհատ ու անկուշտ այդ սպասումը բավարարելու համար լրագրողները վրեժ են լուծում թեմա հորինելով՝ գործընթաց, որ բնորոշ է համաշխարհային լրագրությանը:

Հայաստանյան լրատվամիջոցների մյուս առանձնահատկությունն այն է, որ դրանք հստակ շահեր են սպասարկում: Պետական (կամ եթե կուզեք՝ հանրային) լրատվամիջոցներն երկրի առաջին դեմքերի շահերն են սպասարկում, մասնավորները՝ սեփականատիրոջ: Իհարկե ՁԼՄ-ները ազատության որոշակի սահմաններ ունեն: Նրանց պարբերաբար ավելի ազատ գործելու հնարավորություն է տրվում:

Մասնավոր ՁԼՄ-ների սեփականատերերի ով լինելը որպես կանոն բացահայտ հայտնի չէ լայն հասարակությանը, ինչը շատ կարևոր է անկախության իմիտացիայի համար: Սեփականատերը պարզապես իր լրատվամիջոցի համար փակում է որոշակի թեմաներ: Կան ոլորտներ որոնց նկատմամբ հանձնարարված է լինել ավելի «պատասխանատու»: Այսինքն սեփականատերը պահանջում է որոշակի ոլորտների մասին բացասական տեղեկատվություն հրապարակելուց առաջ ստուգել ու վերստուգել այն: Ես դժվարանում եմ նշել որևէ սեփականատիրոջ, ով կպատվիրեր

«պատասխանատու» լինել Եկեղեցուն վերաբերող հրապարակումներում:

Եկեղեցին եւ ՁԼՄ-ները

Այս տարվա առաջին կեսին ՁԼՄ-ներում բուռն քննարկումներ էին ընթանում Ֆրանսիայի հայոց թեմի, Երուսաղեմի հայոց պատրիարքի նամակների, «Հետք» պարբերականի օֆշորային հանրահայտ թեմաների վերաբերյալ: Այդ քննարկումներում մեր Եկեղեցին բավական ակտիվ էր, ինչն իր ազդեցությունն ունեցավ լրատվամիջոցների վրա: ՁԼՄ-ները, կարծես, առաջին անգամ հասկացան, որ թեման նուրբ է և հավատարիմ մնացին վարքականոնի «Մի՛ վնասիր» պահանջին: Այս ամենին օգնեցին Հայ Եկեղեցու հոգևորականների ու անդամների հրապարակային բացատրություն-հրապարակումները:

ՁԼՄ-ները հակված են լուսաբանելու սկանդալներ: Ավելին՝ հակված են ուռճացնելու ցանկացած սկանդալ, որն իրենց հնարավորություն կտա ավելի երկար գոյատևել ու մնալ հասարակական ուշադրության կենտրոնում: Իհարկե ասածից չպետք է ենթադրել, որ լրագրողները «գիշանգո» են: Պարզապես հասարակությունն առավել ուշադիր է արտառոց տեղեկատվության նկատմամբ: Բայց այն, որ մամուլը զգոն ու զուսպ պահեց վերոհիշյալ քննարկումներում, ապացուցում է, որ հասարակական ընկալումներում, ընդհանրապես, և լրագրողների ու լրատվամիջոցների ղեկավարների շրջանակում, մասնավորապես, Եկեղեցին այն ոլորտներից է, որին առնչվող խնդրահարույց հարցերին անդրադառնալիս անհրաժեշտ է ավելի ուշադիր լինել:

Անցած երկու շաբաթում Եկեղեցու մասին միակ լուրը Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի Եկեղեցիների համաշխարհային խորհրդի համանախագահ ընտրվելու լուրն էր: Լուրը ներկայացրեցին բոլոր ԶԼՄ-ները: Սակայն ոչ մի հրապարակում չեղավ այն մասին, թե ի՛նչ է իրենից ներկայացնում ԵՀԽ-ը: Սա ի ցույց է տալիս, որ մենք՝ լրագրողներս, բավարար չափով տեղյակ չենք կրոնին ու Եկեղեցուն առնչվող խնդիրներին:

Լրագրողները հասարակական առանձնահատուկ կաստա չեն: Հետևաբար՝ առանձնահատուկ ու միայն իրենց բնորոշ պատկերացում չունեն Եկեղեցու մասին: Նրանք իրենց տարիքին, սոցիալական ծագմանը, կրթական ցենզին ու որակին բնորոշ պատկերացումների կրող են: Հետևաբար՝ խիստ կարևոր է ուսումնասիրել Եկեղեցու մասին հասարակության պատկերացումները:

Քիչ թե շատ գրագետ մարդու համար մեր Եկեղեցին հին, փառահեղ մշակութային անցյալ ունեցող կառույց է, առավել գրագետների համար՝ հին, փառահեղ գիտամշակութային անցյալ ունեցող կառույց: Եկեղեցու ներկայի մասին տեղեկատվությունը խիստ պակաս է: «Ո՛վ է եկեղեցականը» հարցը, կարծում եմ, խիստ հակասական պատասխաններ կունենա: Մի կողմից եկեղեցականը սրբակենցաղ միջնադարյան վարդապետ – գիտնական է, մյուս կողմից՝ 19-րդ դարի հայ գրականության ու խորհրդային աթեիստական քարոզչամեթոդների թեթև ձեռքով ներկայացված ազահ քահանա: Խորհրդային քարոզչությունն անաստվածության տարիներին չափազանց արդյունավետ ձևավորեց

Եկեղեցու և կղերականի բացասական ընկալում: Այս պատմական ինտերցիան դեռևս հաղթահարված չէ:

Մեր մամուլի կարծրատիպերից է այն, որ Եկեղեցին և եկեղեցականները նույնն են: Հետևաբար՝ մեկ եկեղեցականի վարքով կարող են բնութագրել Եկեղեցին՝ անկախ տվյալ եկեղեցականի դիրքից և ազդեցությունից: Երկրորդ կարծրատիպն այն է, որ Եկեղեցին խիստ հիերարխիկ կառույց է որից արվում է միանգամայն սխալ ու, հավանաբար, վնասակար եզրակացություն՝ Եկեղեցում բազմակարծություն չկա:

Անկախության առաջին շրջանում մամուլը չափազանց հաճախ էր անդրադառնում Եկեղեցու բարեփոխումների թեմային: Պահանջները տարբեր էին՝ պատարագի լեզվից մինչև սոցիալ – քաղաքական մեծ ու փոքր հարցերի նկատմամբ հրապարակային վերաբերմունքի արտահայտում: Հնարավոր է՝ այդ ձևակերպում-պահանջների մի մասն իրագործվում է:

Մեր Եկեղեցին բավական ակտիվ է լրատվության ոլորտում: Ունի սեփական լրատվամիջոցներ: Ավանդական տպագիր միջոցների կողքին են նորերը՝ «Շողակաթ» հեռուստաընկերությունը, բազմաթիվ կայքեր: Նկատելի է Մայր Աթոռի Տեղեկատվական համակարգի ակտիվ աշխատանքը: Մամուլը որպես կանոն հրապարակում է Տեղեկատվական համակարգի տարածած բոլոր հաղորդագրությունները: Դատելով դրանց հրապարկման արագությունից՝ Եկեղեցուն առնչվող տեղեկատվությունը մամուլին հետաքրքիր է: Բայց այստեղ հակասություն կա՝ Եկեղեցին գործում է ավանդական դանդաղկոտությամբ, իսկ մամուլի կենսակերպը արագությունն է: Ավելին՝ 20-րդ դարում

մամուլը հորինեց նոր ասացվածք, որն իր գոյության բանաձևն է՝ «Չկա ավելի հին բան, քան երեկվա լուրը»:

Հետևաբար՝ կարևորվում է ՁԼՄ-ների հետ տարվող փորձը: Մայր Աթոռի Տեղեկատվական համակարգն այդ փորձն ունի և համագործակցում է հոգևոր-եկեղեցական թեմաներին անդրադարձող լրագրողների հետ, փորձում աջակցել նրանց:

ՀԳ. Այժմ խոստացված «շահերի բախման» օրինակը: Տարիներ առաջ Հայաստանի առողջարանային բնակավայրերից մեկում հանգստանալիս՝ կիրակի օրը մասնակցում էի Ս. Պատարագի: Հնամյա եկեղեցում սրբազան ծեսին բնորոշ խորհրդավոր վիճակ էր: Առողջարանային բնակավայրերում հանգստացող երիտասարդությունը առավոտյան քնած է: Եկեղեցում զբոսաշրջիկներ չկային: Բայց պատարագիչ երիտասարդ քահանայի բարոյախոսական բավական բարդ թեմայով երկարաշունչ ու անվերջ թվացող քարոզի պատճառով հավատացյալների մեծ մասը դուրս եկավ եկեղեցուց: Արժեք այդ մասին գրել ու այս թեման դարձնել քննարկման նյութ: Դրանից բոլորս կշահեինք: Բայց ես ժամանակին չգրեցի այդ մասին:

ԱՄՓՈՓՈՒՄ

- Զանգվածային լրատվության միջոցներում (ԶԼՄ) քիչ չեն հոգևոր թեմաներով հրապարակումները. Եկեղեցին և եկեղեցական կյանքը հանրային հետաքրքրությունների շրջանակում են:
- Մամուլում և սոցիալական մեդիայում հոգևոր-եկեղեցական թեմաները ամենաշատ ընթերցվողներից են: Դրանք արագորեն տարածվում են և քննարկվում:
- Հոգևոր թեմաներով հրապարակումների մեծ մասը հարցազրույցի ժանրում են: Շատ են նաև կարճ լուրերը՝ Մայր Աթոռից կամ թեմերից ստացված մեկնաբանությամբ կամ առանց դրա:
- Լրատվամիջոցներում տեղ են գտնում նաև հոգևորականների ֆեյսբուքյան և բլոգային գրառումները: Սրանով փոխվում է Եկեղեցու՝ ժողովրդից և ներկա իրականությունից կտրված լինելու թյուր կարծիքը: Այսինքն՝ սոցցանցերում և բլոգային տիրույթում հոգևորականների ակտիվությունն ի նպաստ Եկեղեցու է:
- Մայր Աթոռի Տեղեկատվական համակարգի՝ հանրային հնչեղություն ունեցող թեմայի շուրջ արված մեկնաբանությունը ևս կարող է նյութի առիթ դառնալ:
- Եկեղեցին ևս ակտիվ է լրատվության ոլորտում, իսկ Մայր Աթոռի Տեղեկատվական համակարգի տարածած բոլոր հաղորդագրությունները, որպես կանոն, հրապարակվում են մամուլում:

Հոգևոր-եկեղեցական կյանքի իրադարձությունները ՋԼՄ-ների ուշադրության կենտրոնում են: Միաժամանակ այս դաշտում առկա են որոշակի թերություններ.

- լրագրողների՝ հոգևոր ոլորտում գրագիտության պակասը
- լրագրողների մեծ մասը բավարար չափով տեղյակ չէ կրոնին ու Եկեղեցուն առնչվող խնդիրներին, Եկեղեցու ներկայի մասին տեղեկատվությունը խիստ պակաս է
- առկա է Եկեղեցին եկեղեցականի հետ նույնականացնելու կարծրատիպը, և մեկ հոգևորականի սխալ վարքագիծը կարող է ընկալվել որպես ամբողջ Եկեղեցուն բնորոշ երևույթ
- հասարակությունը պատրաստ չէ ընդունել, որ հոգևորականը, որպես անձ, ևս կարող է կարծիք արտահայտել
- ընթերցողը քաղց ունի սկանդալային նյութերի, լրատվամիջոցները՝ like-երի. արդյունքում ցանկացած ստահող լուր, երբեմն փոքրիկ վրիպում արագորեն տարածվում ու քննարկվում է, անխնա և հանիրավի քննադատության առիթ դառնում:

ՋԼՄ-ների ուժը, տեղեկատվությունը հանրայնացնելու առաքելությունը կարելի է օգտագործել այնպես, որ հոգևորականը և Եկեղեցին «յուրային» ընկալվեն: Դրա համար անհրաժեշտ է՝

Եկեղեցական լրատվական կառույցներին

- վերանայել Եկեղեցու տեղեկատվական քաղաքականությունը
- լինել բաց և մատչելի քննարկումների համար
- առատ տեղեկատվություն մատակարարել հասարակությանը եկեղեցական-հոգևոր կյանքի վերաբերյալ սեփական ինֆորմացիոն միջոցներով, թե ՁԼՄ-ների հետ համագործակցաբար
- լուսաբանել հասարակությանը եկեղեցական կյանքում առկա խնդիրների մասին՝ այդպիսով մեծավ մասամբ կանխելով տարընկալումներն ու մեկնաբանությունները
- հնարավորինս արագ և պրոֆեսիոնալ կերպով արձագանքել ՁԼՄ-ների կողմից ներկայացվող հարցադրումներին

Եկեղեցականներին

- ակտիվորեն մասնակից դառնալ հոգևոր, հասարակական կյանքին առնչվող տարբեր ռադիո/հեռուստահաղորդումների
- հանդես գալ հանրությանը հետաքրքրող թեմաների շուրջ հողվածներով ու հարցազրույցներով
- իրենց հովվության վայրերում համագործակցել ՁԼՄ-ների հետ:

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԼՈՐ ՄԵՂԱՆ
ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Եկեղեցին և զանգվածային
լրատվության միջոցները
(քննարկման նյութեր)

Ծրագրի ղեկավար՝ Տ. Վահրամ քահանա Մելիքյան

Օգնական՝ Ժորա սարկավազ Սարգսյան

Մարիամ Ավետիսյան

Խմբագիր՝ Հեղինե Մկրտչյան

Կազմը՝ Backbone Creative Studio



actalliance